ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» սեպտեմբերի2012թ. **N----- - Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՄԱՐՍԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ CIUDAD/GOSPEL ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ N3 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել 2012 թվականի Երևանի և Մարսելի քաղաքապետարանների միջև եվրոպական CIUDAD/GOSPEL ծրագրի համատեքստում համագործակցության N3 համաձայնագիրը ՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՄԱՐՍԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ CIUDAD/GOSPEL ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ N 3 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համագործակցության N3 Համաձայնագրով նախատեսվում է՝ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 52 դպրոցի մարզահրապարակի վերակառուցում, սեմինարների անցկացում, տեխնիկական այցեր, փորձի փոխանակում, Մարսելում փակման սեմինարին մասնակցություն: Նախատեսված է միջոցառումների իրականացման նպատակով Երևան քաղաքին տրամադրել 74.540 եվրո:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝ պահանջվում է վերոնշյալ համագործակցության համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՄԱՐՍԵԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ CIUDAD/GOSPEL ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ N 3 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի և Մարսելի քաղաքապետարանների միջև Եվրոպական CIUDAD/GOSPEL ծրագրի համատեքստում համագործակցության N 3 համաձայնագրի հաստատման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2012 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3
Եվրոպական ծրագրի համատեքստում

CIUDAD/GOSPEL

Հաշվի առնելով Մարսել քաղաքի 2009թ. դեկտեմբերի 14-ի թիվ 09/1329/CURI քննարկումը կապված եվրոպական CIUDAD ծրագրի համատեքստում Եվրոպական հանձնաժողովի և Մարսել քաղաքի միջև կնքված համաձայնագրի հավանության վերաբերյալ

Համաձայնություն է ձեռք բերվել մի կողմից՝ Մարսել քաղաքի, այսուհետև «Քաղաքը», ներկայացված Մարսելի քաղաքապետ պրն. Ժան Կլոդ Գոդենի կամ քաղաքային խորհրդի քննարկմամբ պատշաճ կերպով համաձայնագիրը ստորագրելու լիազորությամբ օժտված նրա ներկայացուցչի կողմից,

և մյուս կողմից Երևան քաղաքի, ներկայացված քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից,

Նախաբան

Եվրոպական CIUDAD ծրագիրը /քաղաքային զարգացման և երկխոսության համագործակցություն ծրագիր/ համագործակցության ծրագիր է քաղաքապետարանների միջև, որը մեկնարկվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից որպես Եվրոպական հարևանության և գործընկերության փաստաթուղթ: Այն հետևում է MED_PACT ծրագրին /Գործընկերության ծրագիր Միջերկրածովյան տեղական իշխանությունների միջև/, որի համար Մարսել քաղաքն ընտրվել է որպես գլխավոր գործընկեր: Այն նպատակ ունի աջակցել երկխոսությանը և համագործակցությանը Եվրոպական Միության և Եվրոպայի հարավային և արևելյան սահմաններում գտնվող գործընկերների տեղական իշխանությունների միջև :

Հետևելով Եվրոպական հանձնաժողովի հայտին՝ Մարսել քաղաքը, որպես գլխավոր գործընկեր, ներկայացրել է GOSPEL կոչվող նախագիծը /Սպորտի բնագավառում կառավարումը որպես սոցիալական ուղղվածություն/՝ Համբուրգ /Գերմանիա/, Երևան /Հայաստան/, Մահդիա /Թունիս/, Սֆլիթ /Խորվաթիա/ և Տրոնդհեյմ /Նորվեգիա/ քաղաքների հետ համագործակցությամբ:

Այս համագործակցության նախագիծը, որը «լավ կառավարման և կայուն քաղաքային զարգացման պլանավորման» թեմայի մի մասն է, ընտրվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից:

2009թ. դեկտեմբերի 14-ի թիվ 09/1329 քննարկմամբ, քաղաքային խորհուրդը հավանություն տվեց Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական GOSPEL ծրագրի գլխավոր գործընկեր Մարսել քաղաքի միջև կնքված համաձայնագրին, որը կոչվում է «դրամաշնորհային պայմանագիր» :

GOSPEL ծրագիրը կտևի 36 ամիս սկսած 2010թ. փետրվարի 15-ից և ունի 529,450.75 Եվրո ընդհանուր բյուջե: Այն ֆինանսավորվում է Եվրամիության կողմից տրվող 423,560.60 եվրո չափով աջակցությամբ:

Ծրագրի գործունեությունը ներառում է .

1. հետազոտական գործունեության իրականացում, որը նպատակ կունենա հստակեցնել ձեռնարկվելիք գործողությունները և դրանց կենսունակությունը,

2. տեխնիկական հաշվետվություններ և առաջարկների նախագծեր,
3. սեմինարների կազմակերպում փորձի փոխանակման և վերապատրաստման նպատակով,
4. աջակցություն Երևանում և Մահդիայում պիլոտային ծրագրերի իրականացմանը,
5. հաղորդակցություն և իրազեկման նախաձեռնություններ տեղական բնակչության համար,
6. ծրագրի գնահատում և դրա ազդեցություններ

Այս բոլոր գործողությունները համակարգվում են Մարսել քաղաքի կողմից: Վարչական և ֆինանսական համակարգումը իրականացվում է միջազգային եվրոպական դեպարտամենտի կողմից, տեխնիկական համակարգումն իրականացվում է ենթակառուցվածքների աջակցման բյուրոյի կողմից:

Մարսել քաղաքը ստանում է նշված ֆինանսավորումն ամբողջապես և յուրաքանչյուր տարի բաժանում գործընկերներից յուրաքանչյուրին կախված աշխատանքներում ներգրավվածությունից: Այս բոլոր տարբեր վճարումները կատարելու համար, Մարսել քաղաքն առաջարկում է յուրաքանչյուր գործընկերոջը մասնակից դառնալ հատուկ համաձայնագրի, որը կոչվում է «գործընկերության համաձայնագիր»:

Այժմ, հետևաբար

Հոդված 1- Գործընկերության համաձայնագրի նպատակը

Սույն համաձայնագրի նպատակն է գլխավոր գործընկեր Մարսել քաղաքի և GOSPEL-ի գործընկեր Երևան քաղաքի միջև 2012 և 2013թթ. հարաբերությունները ընդգրկել համաձայնագրում:

Հոդված 2 – Առաքելություններ

2012 և 2013թթ. Երևան քաղաքը կմասնակցի հետևյալ միջոցառումներին.

1. **տեխնիկական հաշվետվություններ, ուսումնասիրություն և առաջարկների նախագծում**

   - Երևանում տեխնիկական մի քանի առաքելությունների հյուրընկալում՝ Երևանում պիլոտային ծրագրի և

իրականացվելիք այլ գործողությունների ուսումնասիրման նպատակով. հանդիպումներ կառուցման եղանակների, ֆինանսավորման և կառավարման ենթակառուցվածքների պատասխանատուների հետ:

2. Պիլոտային ծրագրի իրականացում

- տենդերների կազմակերպում
- աշխատանքների իրականացում տեղական ֆիրմաների կողմից և աշխատանքների մոնիտորինգ պիլիոտային վայրում

3. Փորձի փոխանակման հետ կապված գործունեություն

- Աշխատանքային հանդիպման / փորձի փոխանակման սեմինարի կազմակերպում Երևան քաղաքում:
- Մասնակցություն Տրոնդհեյմում, Մահդիայում կամ Մարսելում տեղի ունենալիք աշխատանքային այցին:

4. Հաղորդակցման գործողություններ և տեսանելիություն

- Սոցիալական սպորտի բնագավառում տեսանելիության մի քանի գործունեության կազմակերպում, հատկապես քաղաքում բնակվող երիտասարդների և հաշմանդամների համար
- Իրազեկման գործողություններ շահառուների համար
- Մասնակցություն փակման սեմինարին:

Հոդված 3-Ռեսուրսներ

Երևան քաղաքը ծրագրի իրականացման համար կտրամադրի մարդկային ռեսուրսներ, ինչպես որ նախատեսված է Եվրոպական Միության հետ կնքված դրամաշնորհային պայմանագրի հավելված 1-ում:

Հոդված 4- Նախնական ժամանակացույց

GOSPEL ծրագրի իրականացումը ներկայացված է Եվրամիության հետ կնքած դրամաշնորհային պայմանագրի հավելված 1-ում ներկայացված «նախնական ժամանակացույց»-ում:

Այս նախնական ժամանակացույցը կարող է փոփոխվել և լրացվել Եվրոպական Հանձնաժողովի և/կամ բոլոր գործընկերների վերստուգող հանձնաժողովի կողմից :

Հոդված 5 – Ստուգում և գործադիր դրույթներ

Սույն պայմանագիրը ենթակա է միևնույն ֆինանսական պայմաններին և հսկումներին, ինչպես Մարսել քաղաքի և Եվրոպական հանձնաժողովի միջև կնքված պայմանագիրը:

Հոդված 6 – Ընդհանուր ֆինանսական դրույթներ

2011թ.-ին Եվրոպական Միությունը Մարսել քաղաքին վճարել է կանխավճար համաձայն դրամաշնորհային պայմանագրով նախատեսված եվրոպական ներդրմամբ ծրագրի երկրորդ և երրորդ տարվա իրագործումն ապահովելու նպատակով Մարսել քաղաքի կողմից Եվրոպական Հանձնաժողովին ուղարկած երկրորդ վճարման մասին խնդրանքի /հավելված 5/:

Այս վճարումը Մարսել քաղաքին հնարավորություն կտա 2012թ. վերջի և 2013թ. Սկզբի համար կանխավճար տրամադրել իր գործընկերներին, ինչպես որ սահմանված է Եվրամիության կողմից վավերացված բյուջեով: Այս կանխավճարը գործընկերների կողմից պիտի իրատեսականորեն ներկայացվի՝ մինչև ծրագրի ավարտի վերջնական մնացորդի փոխանցումը:

Հոդված 7 – Հատուկ ֆինանսական դրույթներ

Համաձայն սույն համաձայնագրի Հոդված 6-ում սահմանված ընդհանուր ֆինանսական դրույթների՝ վճարումները կատարվում են նույն կարգով, ինչ Եվրոպական միության կողմից կատարվող հատկացումները:

Համաձայն Մարսել քաղաքի և Եվրոպական հանձնաժողովի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի հոդված 3.1-ի, պայմանագիր կնքող մարմնին հատկացվող ֆինանսավորումը կազմում է 529.450.75 Եվրո:

2012 և 2013թթ. Երևան քաղաքին հատկացվելիք բյուջեն կազմում է 75.500 եվրո, որից 960 եվրոն համարվում է ռեսուրսների արժեվորման գումար: Այսպիսով, Երևան քաղաքին 2012 և 2013թթ. համար ֆինանսավորում հատկացվող ընդհանուր գումարը կազմում է 74.540 եվրո:

Սույն համաձայնագրի կնքումից հետո 59.632 եվրո կհատկացվի Երևան քաղաքին որպես կանխավճար: 14.908 եվրո մնացորդը Երևան քաղաքին կտրամադրվի ծրագրի ավարտին: Այս գումարը ստանալու համար, Երևան քաղաքը պարտավորվում է՝

-մասնակցել Եվրոպական հանձնաժողովի կողմից պահանջվող միջանկյալ հաշվետվությունների մշակմանը ;

- ներկայացնել խստորեն վավերացված հաշվետվություն երկրորդ կանխավճարին վերաբերող գումարների օգտագործման մասին;

-ներկայացնել բոլոր համապատասխան ճշգրիտ ֆինանսական փաստաթղթերը Մարսել քաղաքին և ծրագրի աուդիտին, որոնք թույլ կտան Մարսել քաղաքին համապատասխան հաշվետվություն ներկայացնել Եվրոպական հանձնաժողովին:

Փոխանցումը կկատարվի բանկային հաշվին, որի տվյալներն են՝

Հաշվեհամարի անվանակիր՝	«Երևան» հիմնադրամ
Հաշվեհամար՝	2470100660630060 ԵՎՐՈ
Բանկային կոդ՝	24701
IBAN՝	2470100660630060 ԵՎՐՈ
BIC՝	ASHBAM 22

Հոդված 8 – Հատուկ և պայմանագրային պայմաններ

Երևան քաղաքը չի կարողանա օգտագործել հետագա փոխանցումներն ու հավանական մնացորդը, եթե նախորդ հոդվածներով ամրագրված պարտականությունները չկատարվեն:

Երևան քաղաքը համաձայնվում է, որ հոդված 8-ով ամրագրված գումարները չպահանջվեն, ապա Մարսել քաղաքին, նրա

պահանջով ետ է վերադարձնելու արդեն իսկ փոխանցված, բայց չօգտագործված գումարները:

Հոդված 9 – Աուդիտ

Երևան քաղաքը պարտավորվում է վերջին վճարման պահից ի վեր 7 տարի պահպանել բոլոր ֆինանսական փաստաթղթերի բնօրինակները՝ հնարավոր հսկումների համար:

Հոդված 10- Վեճեր

Սույն գործընկերության համաձայնագրի մեկնաբանման կամ կատարման ընթացքում ծագած վեճերի ժամանակ Կողմերը կփորձեն գտնել հաշտեցման եզրեր՝ հետագա համագործակցությունը շարունակելու նպատակով: Չկարգավորված անհամաձայնությունները կկարգավորվեն Մարսելի վարչական դատարանի միջոցով:

Մարսել	Երևան
Ստորագրություն	Ստորագրություն
Ամսաթիվ	Ամսաթիվ